բա Բեթղեհէմէն դէպի արևելք 2.30 ժամ հեռաւորութիւն ունի, իսկ Մեռեալ ծովէն՝ դէպի արևմուտք 1.20 ժամ։ Մար–Սաբա Կապադովկիացի էր, 439 ին ծնած։ 456 ին Երուսաղէմ գալով կ'աշակերտի Եւթիմիոսի. կը ստանայ մեծ համբաւ և մեծ ազդեցութիւն մը կ'ունենայ իր ժամանակի կրօնական և վանական գործերու մէջ։ Բացի մասնաւոր վանքէն զոր շինած է 483 ին, կը հիմնէ նաև ուրիշ եկեղեցիներ՝ այլ եւ այլ առիթներով, ինչպէս կը վկայեն Յայսմաւուրքը և պատմիչներ։

Մար–Սաբայի վանքը հոյակապ հաստատութիւն մըն է և լայնանիստ բերդի մը նման նստած է մեծաշանգուած ժայռի մը գագաթին, լայնչի մասերով իբր աշտարակ կը բարձրանայ Կեդրոնի Ձորին վրայ։ Վանքին երկաթեայ դուռը չմտած՝ հանդիպակաց կողմը կը տեսնուի կանանց աշտարակ ըսուած բերդանման շէնքը, ուր կը հիւրընկալուին կին ուխտաւորները, վասն զի Մար–Սաբայի վանքը հինէն ի վեր արգիլուած է կին ուխտաւորներ ընդունիլ։

Սոյն վանքին ուշադրութեան առնուելիք աւանդութիւնները հետևեալներն են.

ա) Մար–Սաբայի գերեզմանին հիւսիսային արեւելեան կողմը կը գտնուի Ս. Նիկողայոսի մատուռը, ժայռի մը մէջ փորուած ու տակը մոզայիք, երկաթաթել վանդակի մը ետևը, ինչպէս նաև երկու փայտէ սնտուկներու մէջ ցուցադրուած էին կուտակուած գանկերը ա՛յն վանական քառասուն վկաներուն, որ նահատակուած էին Է. դարուն, Պարսից արշաւանքին ժամանակ։ Նոյն մատուռին աջ կողմը կայ չափահասներու յատուկ մեծ աւազան մը։ Ըստ աւանդութեան՝ Մար–Սաբա այս մատուռը յատկացուցած էր հայ վա-